



դատապարտյալ/ նկատմամբ ազատագրկման ձևով պատժի պայմանականորեն չկիրառելը վերացնելու, նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու և պատիժն ի կատար ածելու մասին խնդրանքով:

Դատարանը 2016թ. օգոստոսի 31-ի որոշմամբ միջնորդությունը բավարարել է մասնակիորեն՝ դատապարտյալի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասով, իսկ մնացած մասով՝ մերժել է:

2016թ. սեպտեմբերի 9-ին ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Ս.Ստեփանյանը նշված որոշման դեմ բերել է վերաքննիչ բողոք, որը ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ 2016թ. սեպտեմբերի 23-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ Դատարանի 2016թ. օգոստոսի 31-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ԼՂՀ գլխավոր դատախազ Ա.Մոսիյանը:

Գերագույն դատարանի 2016թ. հոկտեմբերի 28-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2.Գործի փաստական հանգամանքները և վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն գործով 19.08.2016թ. Դատարան ներկայացված միջնորդությունից և դրան կից նյութերից բխում է հետևյալը.

Դատարանը 2015 թ. հոկտեմբերի 6-ի դատավճռով Մակար Հայրապետյանին մեղավոր է ճանաչել ԼՂՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասով և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատագրկում 6 /վեց/ ամիս ժամկետով: Նույն օրենսգրքի 69-րդ հոդվածի կիրառմամբ՝ Դատարանը Մակար Հայրապետյանի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառել՝ սահմանելով փորձաշրջան 1 /մեկ/ տարի ժամկետով:

Դատավճիռը վերաքննության կարգով չի բողոքարկվել և օրինական ուժի մեջ է մտել 2015թ. նոյեմբերի 9-ին, իսկ 2015թ. դեկտեմբերի 5-ին դատապարտյալը հաշվառման է վերցվել Տեսչությունում:

Գործում առկա ծանուցագրի համաձայն՝ դատապարտյալը ստորագրությամբ պարտավորվել է 09.12.2015թ. ժամը 11<sup>00</sup>-ին ներկայանալ Տեսչություն /գ.թ.21/: Տեսչության 09.12.2015թ. արձանագրության համաձայն՝ դատապարտյալը ստորագրությամբ ծանոթացել է պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածով սահմանված՝ պարտականությունների չկատարման համար պատասխանատվության պայմաններին, որի համար նույն օրը կազմված արձանագրությամբ դատապարտյալն իր ստորագրությամբ հավաստել է, որ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված իր իրավունքները և պարտականությունները տեսչության կողմից պարզաբանվել են իրեն և նա պարտավորվում է յուրաքանչյուր ամսվա 14-ին և 28-ին ներկայանալ Տեսչություն /գ.թ.23-24/: Իսկ 09.12.2015թ. կազմված պարտավորագրով դատապարտյալը պարտավորվել է առանց Տեսչությանը տեղյակ պահելու մինչև պատժի կրման ավարտը՝ 05.12.2016թ. չլքել ԼՂՀ սահմանը /գ.թ.31/:

Տեսչության 29.12.2015թ. արձանագրության համաձայն՝ դատապարտյալն իր ստորագրությամբ հավաստել է, որ ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված իր

իրավունքները և պարտականությունները Տեսչության կողմից պարզաբանվել են իրեն և նա պարտավորվում է յուրաքանչյուր ամսվա 23-ին ներկայանալ Տեսչություն /գ.թ.34/: Նույն օրը Տեսչության կողմից գրույց է անցկացվել դատապարտյալի հետ, որի մասին կազմվել է արձանագրություն /գ. թ.16/:

Դատապարտյալի բնակության վայր մեկնելու մասին 11.02.2016թ. արձանագրության համաձայն՝ դատապարտյալը չէր գտնվում իր բնակության վայրում /գ.թ.41/:

Տեսչության ծանուցագրի համաձայն՝ դատապարտյալին հայտնվել է 2016թ. հունիսի 24-ին՝ ժամը 11<sup>00</sup>-ին Տեսչություն ներկայանալու անհրաժեշտության մասին /գ.թ.46/: Նշված ծանուցագիրը ստացված չէ դատապարտյալի կողմից:

Դատապարտյալի բնակության վայր մեկնելու մասին 23.06.2016թ. արձանագրության համաձայն՝ դատապարտյալի բնակության վայր՝ Վանք գյուղ մեկնելու ժամանակ վերջինս այնտեղ չէր գտնվում. ըստ համայնքի ղեկավարի հայտնած տեղեկությունների՝ դատապարտյալը 2016թ. հունիսի 17-ին ազատազրկման վայրից վերադարձել է գյուղ, իսկ մի քանի օր հետո՝ հունիսի 20-ին կամ 21-ին՝ առողջական վիճակը կտրուկ վատթարանալու պատճառով, բուժման նպատակով նա տեղափոխվել է ՀՀ ԱՆ ՀԹԴ Ավանի կլինիկա /գ.թ.47/:

ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ-ին հասցեագրված 30.06.2016թ. թիվ 22-1-3/1392 գրությամբ՝ Տեսչությունը խնդրել է տեղեկացնել դատապարտյալի բուժման ընթացքի և կենտրոնից դուրս գրվելու մասին /գ. թ.49/: ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ 11.07.2016թ. թիվ 2713 պատասխան-գրության համաձայն՝ 21.06.2016թ.-01.07.2016թ. դատապարտյալը կենտրոնում ստացել է ստացիոնար բուժում /գ.թ.62/:

Վանք համայնքի ղեկավարի տված տեղեկանքի համաձայն՝ դատապարտյալը 2016թ. հունիսի 17-ին ազատվելով ազատազրկման վայրից, ներկայացել է Վանք գյուղ, սակայն առողջական վիճակը կտրուկ վատթարանալու պատճառով 2016թ. հունիսի 20-ին տեղափոխվել է ՀՀ ք. Երևան՝ համապատասխան բուժում ստանալու համար: Տեղեկանքը կազմելու պահի դրությամբ դատապարտյալը գյուղում չի գտնվել և նրա բնակության վայրի մասին տեղեկություններ չկան /գ.թ.52/:

ԼՂՀ ոստիկանության ՔՀՎ պետին հասցեագրված 02.07.2016թ. թիվ 22-1-3/1428 գրությամբ Տեսչությունը խնդրել է ստուգել դատապարտյալի՝ ՀՀ սահմաններում գտնվելու կամ այն լքելու տեղեկությունները /գ.թ.53/: ԼՂՀ ոստիկանության ՔՀՎ 29.07.2016թ. թիվ 30-3/1-9101 պատասխան-գրության և դրան կից տեղեկությունների համաձայն՝ դատապարտյալը 01.07.2015թ. ժամը 17:27-ին «Զվարթնոց» սահմանային կետով լքել է ՀՀ սահմանը /գ.թ. 63-64/:

Ըստ միջնորդության՝ դատապարտյալը խուսափում է Տեսչության կողմից նրա նկատմամբ սահմանված վերահսկողությունից:

### **3. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտումներ: Մասնավորապես, թույլ է տվել առերևույթ դատական սխալ՝ նախատեսված ԼՂՀ

քրեական դատավարության օրենսգրքի 430-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, որն ազդել է գործի ելքի վրա:

Նշված պնդումը բողոք բերողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը դատապարտյալին համարելով պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում վերահսկողությունից խուսափող անձ, նրա նկատմամբ հայտարարել է հետախուզում, այն դեպքում, երբ ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 132-րդ հոդվածի դրույթներից բխում է, որ վերահսկողությունից խուսափող անձի նկատմամբ նախ պետք է քննարկվի պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հարցը, որից հետո միայն դատարանն իրավունք ունի դատավճռով նշանակված պատիժը կատարելու ընթացքում պատժի կրումից խուսափող անձի նկատմամբ հայտարարել հետախուզում, ինչը բխում է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդվածի պահանջներից:

Այնուհետև բողոքաբերը նշել է, որ Վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 23-ի որոշումը ենթակա է բեկանման և ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական տեսչության պետ Հ.Գ. Մաթևոսյանի ներկայացրած գրավոր միջնորդությունը դատապարտյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու, նրա նկատմամբ հետախուզում հայտարարելու և պատիժն ի կատար ածելու մասին լրիվությամբ ենթակա է բավարարման: Վերաքննիչ դատարանը, իր որոշման մեջ ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սխալ մեկնաբանելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 5-րդ հոդվածը, պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելը դիտել է որպես քրեաիրավական այլ հետևանք և գտել, որ այդ հարցը ենթակա է լուծման միայն ԼՂՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված հիմքերով: Վերաքննիչ դատարանն իր որոշմամբ սահմանափակել է ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ ՔԿՏ պետի օրենքով նախատեսված պարտականությունը, քանի որ ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի 2-րդ և 132-րդ հոդվածների վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ ՔԿՏ պետը պարտավոր է պատիժը պայմանականորեն չկիրառելիս փորձաշրջանի ընթացքում անձի կողմից վերահսկողությունից խուսափելու դեպքում միջնորդություն ներկայացնել դատարան:

Ըստ բողոքի հեղինակի՝ չնայած ազատազրկման ձևով նշանակված պատժի պայմանականորեն չկիրառելը վերացնելու և պատիժն ի կատար ածելու վերաբերյալ միջնորդությունը դասվում է դատական որոշման կատարման հետ կապված հարցերի շարքին, որի լուծման կարգը սահմանված է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ գլխում ներառված 453-րդ հոդվածով, այնուամենայնիվ, այս դեպքում, դատապարտյալի պարտադիր մասնակցության պահանջը չի բխում տվյալ կարգի միջնորդությունների քննության տրամաբանությունից: Դա ակնհայտ երևում է ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդվածում ամրագրված պատժի կրումից խուսափող դատապարտյալի հետախուզում հայտարարելու վերաբերյալ միջնորդությունների քննության բովանդակությունից: Ավելին, նույն օրենսգրքի 453-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ դատական որոշման քաղաքացիական հայցի մասը կատարելու հետ կապված դատապարտյալի չներկայանալը գործի քննությանը խոչընդոտ չէ: Նույն օրենսգրքի 444-րդ հոդվածը սահմանում է դատական նիստին դատապարտյալի մասնակցության իրավունքը, այսինքն՝ դատական որոշումների կատարման փուլում դատական նիստին դատապարտյալի մասնակցությունը նշված հոդվածի

խմաստով պարտադիր բնույթ չի կրում: Հաշվի առնելով, որ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու հետ կապված հարցերն անալոգիայի կարգով քննարկվում են ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ գլխով սահմանված կանոններով, որտեղ կան բացառություններ դատական որոշումների կատարման փուլում դատական նիստի դատապարտյալի պարտադիր մասնակցության դեպքերից, դրանցից է՝ պատժի կրումից խուսափող անձի նկատմամբ հետախուզում հայտարարելու միջնորդության քննարկումը, ուստի վերահսկողությունից խուսափող անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու միջնորդությունը նույնպես ենթակա է քննարկման նույն կանոններով:

Նշելով, որ նշված դրույթների վերլուծությունից հետևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելիս սահմանված փորձաշրջանի ընթացքում անձի կողմից վերահսկողությունից խուսափելու դեպքում /անձը ԼՂՀ սահմաններից դուրս գտնվելու պայմաններում/ նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը չի կարող միջնորդություն ներկայացնել դատարան պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու համար, քանի որ համաձայն ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 453-րդ հոդվածի 1-ին մասի դատական որոշման հետ կապված հարցերի քննությանը դատապարտյալի մասնակցությունը պարտադիր է, հակառակ դեպքում ներկայացված միջնորդությունները մերժվելու են: Նման պայմաններում ստեղծվում են քրեական պատասխանատվությունից խուսափելու և ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածով սահմանված քրեական դատավարության օրենսդրության խնդիրների խախտման հնարավորություն այն դատապարտյալների համար, ովքեր լքում են ԼՂՀ սահմանները: Ներկա իրավակարգավորման պայմաններում չկա պատիժը պայմանականորեն չկիրառելիս սահմանված փորձաշրջանի ժամկետի կասեցման կամ ընդհատման հնարավորություն, ինչի արդյունքում վերահսկողությունից փաստացի խուսափող դատապարտյալի նկատմամբ փորձաշրջանի սահմանված ժամկետը լրանալուց հետո չի կարող պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացվել և ԼՂՀ քրեական օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի հիմքով նա կհամարվի դատվածություն չունեցող անձ: Ավելին, առանց պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատապարտյալի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված դատական ակտի ի կատար ածման անհրաժեշտության, հետախուզում հայտարարելու մասին որոշումն ինքնին կրելու է ձևական բնույթ: ԼՂՀ սահմաններից դուրս գտնվող դատապարտյալի ներկայությունը ԼՂՀ դատարաններում ապահովելու համար հետախուզում հայտարարելու որոշման հետ միաժամանակ պետք է լինի նաև անձին արգելանքի վերցնելու մասին համանապատասխան դատական ակտ:

Վերոգրյալ պատճառաբանությամբ, բողոքի հեղինակը խնդրել է բեկանել ամբողջությամբ ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 23-ի որոշումը և Դատարանի 2016թ. օգոստոսի 8-ի որոշումը՝ դատապարտյալի նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատժի պայմանականորեն չկիրառելը վերացնելու և պատիժն ի կատար ածելու վերաբերյալ ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ ՔԿՏ պետի միջնորդությունը մերժելու, իսկ հետախուզում հայտարարելու մասով բավարարելու մասին և բողոքում նշված հիմնավորումներով ամբողջությամբ բավարարել ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ ՔԿՏ պետի 2016թ. օգոստոսի 19-ի միջնորդությունը:

4. Գերագույն դատարանի իրավական վերլուծությունները, պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով նյութերը՝ Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն հետևյալ պատճառաբանությամբ.

Գերագույն դատարանը փաստում է, որ ներկայացված միջնորդությունը քննելու համար Դատարանը՝ մինչ դատապարտյալի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և այն ի կատար ածելու մասին որոշում կայացնելը, պետք էր պատասխաններ այն հարցերին, թե, արդյո՞ք, դատապարտյալին տվյալ քրեական վարույթով կարելի է համարել փորձաշրջանի ընթացքում դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարող, կամ վերահսկողությունից խուսափող անձ, և երկրորդ՝ դատապարտյալին հետախուզում հայտարարելու մասին որոշում կայացնելիս անհրաժեշտ էր որ պարզեր, թե արդյո՞ք տվյալ քրեական վարույթով նրան կարելի է համարել ազատագրկման ձևով պատժի կրումից խուսափող անձ:

ԼՂՀ քրեակատարողական օրենսգրքի «Պատասխանատվությունը և պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում սահմանված պարտականությունների չկատարելու համար» վերտառությամբ 132-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում անձի կողմից դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարելու կամ վերահսկողությունից խուսափելու դեպքերում նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին»:

Վերոնշյալ իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի ընթացքում անձի կողմից դատարանի դատավճռով իր վրա դրված պարտականությունները պարբերաբար կամ չարամտորեն չկատարելու, կամ վերահսկողությունից խուսափելու դեպքերում միայն նրա վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը կարող է դիմել դատարան՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և դատավճռով նշանակված պատիժը կատարելու մասին միջնորդությունը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վարույթի նյութերում բացակայում է դատապարտյալ Մակար Հայրապետյանի վրա դատարանի դատավճռով որևէ պարտականություն դրված լինելու, հետևաբար՝ այն վերջինիս կողմից չարամտորեն չկատարելու մասին վկայող որևէ ապացույց:

Նույն հոդվածի 4-րդ մասը սահմանում է «վերահսկողությունից խուսափելու» հասկացությունը, ըստ որի. «Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձը վերահսկողությունից խուսափող է համարվում, եթե նրա գտնվելու վայրը չի բացահայտվում 30 օրվա ընթացքում»:

Ըստ ներկայացված միջնորդության՝ դատապարտյալը պարտավոր էր ներկայանալ ՔԿՎ ՔԿՏ՝ փորձաշրջանի մասով հսկողությունը շարունակելու համար, սակայն, առողջական վիճակը վատթարանալու պատճառով 2016թ. հունիսի 20-ին տեղափոխվել է ք. Երևան՝ ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲ ընկերություն: ՔԿՎ ՔԿՏ-ի կողմից գրություն է ուղարկվել ՀՀ ԱՆ «Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ՝

դատապարտյալի բուժման ընթացքի և դուրս գրվելու մասին տեղեկություններ ստանալու նպատակով: ՀՀ ԱՆ <<Նարկոլոգիական հանրապետական կենտրոն>> ՓԲԸ տնօրենի կողմից ՔԿՎ ՔԿՏ պետին հասցեագրված 11.07.2016թ. թիվ 2713 գրության համաձայն՝ <<... Մակար Գուրենի Հայրապետյանը <<Նարկոլոգիական հանրապետական կենտրոն>> ՓԲԸ-ում գտնվել է ստացիոնար բուժման մեջ 21.06.2016թ.-01.07.2016թ. <<Հոգեկան և վարքային խանգարումներ, առաջացած մի քանի թմրամիջոցների միաժամանակյա օգտագործումից և այլ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով կախվածության համախտանիշ>> ախտորոշումով:

Այսպիսով, վարույթի նյութերով հաստատվում է, որ դատապարտյալի գտնվելու վայրը ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ ՔԿՏ-ի համար բացահայտ էր եղել մինչև 2016թ. հունիսի 20-ը, երբ տեղեկություններ են ստացվել, որ նա առողջական վիճակը վատթարանալու պատճառով նշված օրը տեղափոխվել ք.Երևան՝ ՀՀ ԱՆ <<Նարկոլոգիական հանրապետական կենտրոն>> ՓԲԸ: Մակայն, արդեն 22-րդ օրը՝ 2016թ. հուլիսի 12-ին, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմնի ղեկավարը՝ ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ ՔԿՏ պետ Հ.Մաթևոսյանը, ի խախտումն ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի, համապատասխան միջնորդություն է ներկայացրել Դատարան:

Դատարանը 2016թ. հուլիսի 22-ին որոշում է կայացրել դատապարտյալի հետախուզում հայտատարարելու մասին, որն վերաքննության կարգով բողոքարկվել է Վերաքննիչ դատարան: Վերաքննիչ դատարանը 2016թ. օգոստոսի 11-ի որոշմամբ ԼՂՀ գլխավոր դատախազի տեղակալ Ս. Հակոբյանի վերաքննիչ բողոքը բավարարել է և ամբողջությամբ բեկանելով Դատարանի որոշումը՝ ներկայացված միջնորդությունը մերժել է: Մակայն, ԼՂՀ ոստիկանության ՔԿՎ ՔԿՏ պետը չսպասելով նշված որոշման օրինական ուժի մեջ մտնելուն, դեռևս բողոքարկման ժամկետում նոր միջնորդություն է ներկայացրել Դատարան՝ առանց որևէ լրացուցիչ ապացույց ավելացնելով նյութերին ու միջոցներ չի ձեռնարկել դատապարտյալի հնարավոր գտնվելու վայրը պարզելու համար, քանի որ առկա էր դատապարտյալի առողջական վիճակի կտրուկ վատթարացման մասին տեղեկություններ, որն էլ Դատարանն անհիմն կերպով բավարարել է, իսկ Վերաքննիչ դատարանը այն թողել է օրինական ուժի մեջ:

ԼՂՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է. <<Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով>>:

Այսպիսով, վերոնշյալ հիմնավորումներով բացակայում են դատապարտյալ Մակար Հայրապետյանի նկատմամբ դատավճռով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու և այն ի կատար ածելու՝ միջնորդությունը ներկայացնելու օրվա դրությամբ օրենսդրությամբ նախատեսված հիմքերը:

ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 450-րդ հոդվածի հանաձայն՝ դատարանն իրավունք ունի հայտարարելու պատժի կրումից խուսափող դատապարտյալի հետախուզում՝ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վարույթի նյութերում բացակայում է դատապարտյալ Մակար Հայրապետյանի կողմից պատժի կրումից խուսափելու մասին վկայող որևէ ապացույց: Հետևաբար, միջնորդությունը

ներկայացնելու օրվա դրությամբ բացակայում են նաև նրան հետախուզում հայտարարելու հիմքերը:

Հիմք ընդունելով նշվածները, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել քրեակատարողական օրենքի էական խախտում, ուստի Դատարանի 2016թ. օգոստոսի 31-ի «Հետախուզում հայտարարելու մասին» որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 23-ի որոշումը օրինական և հիմնավորված չէ, ինչն էլ Գերագույն դատարանին հիմք է տալիս ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ուժով Դատարանի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին Վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 23-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել ու ներկայացված միջնորդությունը՝ մերժել, իսկ մնացած մասով՝ Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 421-424-րդ, 435-436-րդ, 438-439-րդ հոդվածներով և 440-րդ հոդվածի 1-ին մասով՝ Գերագույն դատարան

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ գլխավոր դատախազ Ա. Մոսիյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Դատապարտյալ Մակար Գուրգենի Հայրապետյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու վերաբերյալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2016թ. օգոստոսի 31-ի որոշումը օրինական ուժի մեջ թողնելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 23-ի որոշումը մասնակիորեն բեկանել և փոփոխել: ԼՂՀ ՔԿՎ ՔԿՏ պետ Հ. Մաթևոսյանի միջնորդությունը՝ Մակար Հայրապետյանի նկատմամբ հետախուզում հայտարարելու մասով, մերժել:

ԼՂՀ Վերաքննիչ դատարանի որոշումը մնացած մասով թողնել օրինական ուժի մեջ:

2. Մույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ \_\_\_\_\_ Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ \_\_\_\_\_ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

\_\_\_\_\_ Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ